Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն

Երկիր՝	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը՝	54835
Բիզնես ոլորտ՝	Ենթակառուցվածք, Եվրասիա
Ծանուցման տեսակ՝	ՊԵՏԱԿԱՆ
Բնապահպանական դաս՝	
Հաստատման նախատեսվող ամսաթիվ՝	Մայիսի 07, 2025թ.
Կարգավիճակ՝	Անցել է վերջնական վերանայում, ակնկալվում վերջնական հաստատում
Ծրագրի ամփոփ փաստաթղթի անգլերեն տարբերակի հրապարակման օր՝	Փետրվարի 29, 2024թ.

Ծրագրի նկարագիր

ՎԶԵԲ-ի վարկը կաջակցի Երևանի մոտակայքում մաքսային և լոգիստիկ կենտրոն («ՄԼԿ») («Երևանի ՄԼԿ») հիմնելուն՝ ֆինանսավորում տրամադրելով մաքսային տերմինալի կառուցման և համապատասխան սարքավորումների գնման համար («Ծրագիր»): Ակնկալվում է, որ ներդրումը կհապատասխանի «կանաչ» շենքի հավաստագրման չափորոշիչներին, որի արդյունքում Երևանի ՄԼԿ-ն՝ Սյունիքի համանման ՄԼԿ-ի հետ մեկտեղ, կդառնան նման հավաստագիր ստացած պետական առաջին երկու շենքերից:

Ծրագրի նպատակներ

Ակնկալվում է, որ «Երևանի ՄԼԿ»-ն կբարձրացնի մաքսային գործառնությունների արդյունավետությունը և թափանցիկությունը, կբարելավի ծառայությունների մատուցման որակը և «Մեկ պատուհանի»/ «Միասնական պատուհանի» ներդրման արդյունքում կկրճատի մաքսազերծման ծառայությունների համար պահանջվող ժամանակը:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

ETI միավոր՝ 70

Կանաչ. Ակնկալվում է, որ «Երևանի ՄԼԿ» շենքը կլինի Հայաստանում առաջին երկու «կանաչ» վարչական շենքերից, որոնք կստանան միջազգայնորեն ճանաչված «Կանաչ-շենք» վկայականը:

PUBLIC

Ներառական: Ակնկալվում է, որ Ծրագիրը կաջակցի ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնին՝ ընդլայնելու հմտությունների ուսուցման հասանելիությունը ողջ երկրով մեկ:

Հաճախորդի մասին տեղեկատվություն

ՀԱՅԱՍՏԱՆ, ՊԵՏԱԿԱՆ

Վարկառուն հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունը՝ ներկայացված ի դեմս Ֆինանսների նախարարության: Ծրագրի իրականացնող գերատեսչությունը Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեն է, որը հանդիսանում է Հայաստանում հարկային և մաքսային իրավասու մարմինը:

ՎԶԵԲ ֆինանսավորման ամփոփագիր

39,000,000.00 Եվրո

Ծրագրի ընդհանուր արժեք

45,000,000.00 Եվրո

Ծրագրի ընդհանուր արժեքը ներառում է 6 միլիոն եվրո ներդրումային դրամաշնորհ Եվրոպական միության հարևանության ներդրումային պլատֆորմից:

Լրացուցիչ

ՎԶԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը հասանելի չէ շուկայում՝ առևտրային աղբյուրներից՝ ողջամիտ պայմաններով և ժամկետով: Ավելին, այս ոլորտում ՎԶԵԲ-ի փորձը կնպաստի բարելավված ստանդարտների կիրառմանը:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասակարգված է որպես Բ տեսակ (ԲՍԾ 2019). Ծրագրի համար իրականացվել է անկախ բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանության (due diligence) ստուգում 2024 թ.-ի մարտին, որը պետք է կիրառվի մանրամասնորեն մշակված գծագրից հետո:
Առաջարկվող տարածքը գտնվում է այն հողատարածքում, որը նախկինում պատկանում էր Պաշտպանության նախարարությանը, որտեղ կան մի շարք լքված շենքեր և շինություններ: Փորձագետները նկատել են ծանր վառելիքով աղտոտման նշաններ: Հնարավոր է, որ տարածքում կան այլ վտանգավոր նյութեր, ուստի աղտոտման ռիսկը գնահատելու համար հարկավոր է լրացուցիչ հետազոտություն անցկացնել որպես ազգային ԲԱԳ-ի մաս:
Տարածքը հարակից է բնակելի հատվածին: Հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրել շենքերի կառուցվածքային ամբողջականությունը և փաստաթղթավորել նախքան շինարարությունը սկսելը: «Երեւան ՄԼԳ»-ի կառուցումը և շահագործումը կազդի երթևեկության ավելացման վրա, ուստի մինչև շինարարության մեկնարկը պետք է իրականացնել երթևեկության և ճանապարհային անվտանգության համապարփակ գնահատում: Ծրագրի հետ կապված հիմնական սոցիալական ազդեցությունները ներառում են Ծրագրի տարածքի մոտակայքում գտնվող հողատարածքի/կառույցների հնարավոր ձեռքբերումը և վերաբնակեցումը:
Ազգային ԲԱԳ-ն ավարտելուց և համապարփակ գծագրի վերջանականացումից հետո, այդ թվում՝ «Երեւան ՄԼԳ»-ի շուրջ սանիտարական գոտու հիմնումից և շահագործելուց հետո,

PUBLIC

PUBLIC

ՊԵԿ-ը կհաստատի, թե արդյոք հնարավոր է տեղահանության ազդեցություն, և անհրաժեշտության դեպքում կպատրաստի և կներկայացնի PR5-ին համապատասխան վերաբնակեցման ծրագիր:
Հաճախորդը կիրականացնի Վերաբնակեցման ծրագիրը և կհաստատի դրա համապատասխանությունը PR5-ին՝ Բանկին ներկայացնելով ՎԾ-ի իրագործման հաշվետվությունը: Այլ սոցիալական ռիսկերը վերաբերում են շինարարության փուլում աշխատանքային գործելակերպին, որոնք կմեղմացվեն PR2-ի հիմնական պահանջները կիրառելով (օրինակ՝ աշխատողների կացության ապահովում, աշխատողներին գրավոր պայմանագրերի տրամադրում, աշխատողների ներգրավվածություն, խտրականության բացառում, բողոքների անանուն մշակում) մրցութային փաստաթղթերում և հետագայում կապալառուի/ենթակապալառուների համաձայնագրերում:
Աշխատողների բողոքարկման մեխանիզմ կմշակվի կապալառուի կողմից՝ աշխատողների մտահոգությունները գրանցելու և դրանց արձագանքելու համար: Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը ներառում է հիմնական շահագրգիռ կողմերի ցանկ, որոնց հետ կանոնավոր կերպով խորհրդակցություն կանցկացվի՝ որպես նախագծի իրականացման ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագրի մաս: Մշակվել է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՍԳԾ), որը հետագայում կբարելավվի՝ բարձր ռիսկային գործողությունների անհապաղ գնահատման նպատակով: Համապատասխան մեղմման միջոցառումներ պետք է ներառվեն վարկի փաստաթղթերում և ընդգրկվեն շինարարական կապալառու(ներ)ի մրցութային փաստաթղթերում:

Տեխնիկական համագործակցություն և դրամաշնորհի ֆինանսավորում

Սույն Ծրագրի շրջանակներում նախատեսվում են Տեխնիկական համագործակցության («ՏՀ») հետևյալ խորհրդատվական ծառայությունները՝

- ՎՁԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամից (SSF) ֆինանսավորվող **տեխնիկա- տնտեսական իրագործելիության ուսումնասիրություն:**
- **Գնումների նախնական աջակցություն,** որը կֆինանսավորվի բաժնետերերի հատուկ հիմնադրամից (SSF):
- **Աջակցություն «կանաչ շենք» հավաստագրում ստանալու հարցում,** որի ֆինանսավորման աղբյուրը հաստատման փուլում է:
- **Ծրագրի իրականացման աջակցություն,** որի ֆինանսավորման աղբյուրը հաստատման փուլում է:
- **Հմտությունների հասանելիություն էլեկտրոնային** ուսուցման միջոցով, որի ֆինանսավորման աղբյուրը հաստատման փուլում է:
- **Տարածքի ռիսկերի գնահատում,** որի ֆինանսավորման աղբյուրը հաստատման փուլում է:
- **ԾԻԳ աջակցության թիմ,** որի ֆինանսավորման աղբյուրը հաստատման փուլում է:

Ընկերության կոնտակտային տվյալներ

Սոսե Ստեփանյան
sose_stepanyan@customs.am

374 (60) 84 44 48

https://www.src.am/en
3,7 Մ. Խորենացի, Երևան, 0015, Հայաստան

PUBLIC

Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168
Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք ՎԶԵԲ-ի գնումներ:

Հեռ.՝ +44 20 7338 6794
Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքեն դրանց:

Այս կապակցությամբ ՎԶԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են ԲՍՔ-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎԶԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎԶԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել Տեղեկությունների հասանելիության քաղաքականության կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը:

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար,

վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը կամ իր՝ Տեղեկությունների հասանելիության քաղաքականության՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը ՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես Դիմում ներկայացնել ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com ՝ ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: